

Մական խորհրդոց :

Այլ աւաղ. մերձեալ էին դարձեալ աւուրբս սգոյ ազգասէր սրտից. հարկ էր նոցա արտասութել զանկումն բարերար և բարելից տնկոյն մեծի, որ 'ի վաղնջական և յանշքացեալ պարտիզի տանս Հայոց զմեծատարած հռվանւոյն իւրոյ և զընտիր ընտիր պըտղոցն վայելս բաշխէր ամենեցուն : Ծանրացաւ խօթութիւնն որ տանջէր զնայամաց հետէ, և նոր ևս ախտ հիւանդութեն անկաւ զնովաւ . մեկնեցաւ 'ի դիւղ ուրեմն՝ զի գուցէ օդոցն փոփոխութեամբ կազդուրեցի փոքր մի. այլ չեղե հնար : Ծանեաւ նա զհասանել վախճանին . հայեցաւ 'ի բարձունս առ կարողն ամենայնի և ողորմած, առ վարձահատոյցն արդարութեան իւրոյ և ողորմածութեան, և յամսօրեայ դառն հիւանդութեն զյոս վստահութեն իւրոյ 'ի նա և եթիւրսխեալ պնդապէս՝ ցանդ զսաղմուերգուին ունէր 'ի բերանի զաղերս . “Տէր, հան 'ի բանտէ զանձն իմ, գոհանամ զանուանէ քումմէ „ : Տկարացաւ մարմնովն մինչեւ 'ի սպառ . այլ զօրացեալ խորհրդովք եկեղեցւոյ սըրբոյ և ամենայն քրիստոսական կրօնիցս պատրաստութեամբ՝ կնքեաց զկեանս իւր 'ի հասակի ամաց վաթսուն և ութից 'ի 10 աւուր ամսեանն օգոստոսի ըստ նորոյ տումարի, և եթող զիւրսն և զբարեկամն իւր 'ի սուրգ և 'ի տրտմութիւն անմիսիթար :

Խմբեցաւ քաղաքն ամենայն 'ի հանգէս յուղարկաւորութեան նորա . զի և չեր ոք 'ի քաղաքին որ անմասն ելեալ իցէ 'ի բարերարութեանցնորա, այլ մանաւանդ իբրև զհայր հասարակաց ողբացին զնա ամենեքեան, և մեծաշուք պայծառութեամբ համօրէն բազմութեան քահանայից քաղաքին, խնկովք և մոմեղինօք և խաչազարդնշանօք տարեալ հանգուցին զնա 'ի մայր եկեղեցւոցն . և յետ երից աւուրց զմնաւալ զպատուական դիակնն յղեցին շոգենաւու 'ի Օմիւռնիա՝ անդ ամփոփել զնա 'ի հայրենի շիրիմն,

այս ինքն է 'ի դամբարանի հօր և մօր իւրոյ, որպէս աւանդեալն էր կտակաւ : Իսկ մեզ պատուելոցս մաերիմ բարեկամութք մեծի իշխանին և քաղցր ընտանութեամբ նորա զամն յոլովս, որպէս և ամենայն ազգասիրաց և համօրէն հայկազանց՝ միակ սփոփանք և միիթարութիւն 'ի վերայ մեծի տըրտմութեանս այն է, զի ժառանգորդորդս բարեմասնութեանց իւրոց և առաքինութեանցն մեծամեծաց եթող նազբեռորդին իւր զպատուական Յովսէփ Չելչպի Խուսուֆեան, և զմօրաքեռորդին իւր զազնիւ զլքրահամ Ամիրայ Ապրոյեան, որք առ նմա հրահանգեալք և ընդ նորին զրուատելի շաւիղմն ընթացեալք՝ անմահացուցեն անշուշտ զպատուական յիշատակ մեծի ամիրային մերոյ և զազդատոհմի նորա 'ի սիրտս մերոցն և օտարաց, և ըզմից նորա և հասարակաց տացեն լրումն անթերի :

Հ. Գ. ԱՅՎ.:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ

ՀՀ Ա Էներգետոց հագուստին յեւ :

ՀԱԳՈՒՏՏԸ մարդուս բնաւորութիւնը զփոխեր, բայց կերպով մը յայտնի կ'ընէ : Ասոր համար արեւելցոց ծանր բնաւորութիւնը իրենց լայն ու ծանր հագուստներէն ալ կ'իմացուի, ինչպէս որ խւրոպացւոց թեթեւութիւնը, և մանաւանդ Գաղղիացւոց՝ որ աս ատեններս գրեթէ ամենուն օրինակ եղած են, իրենց ձիգունեղ հագուստներէն ալ կ'երեւնայ :

Ա Ենետկեցիք քանի որ արեւելքի հետ առուտուր ու վերաբերութիւն ունէին՝ արեւելցոց ձեռվով՝ լայն ու փառահեղ հագուստներ կը հագնէին . երբոր սկսան աւելի Խտալից ուրիշ բնակչացը հետ վարուիլ անոնց ձեռ առին, ետքերն ալ Գաղղիացւոց հետ ձանցւորելով՝ անոնց պէս սկսան հա-



|| Էնեպիեցոց դժոխն հագուստը :

Կուիլ : Հին ատենը || Ենետկեցւոց սիրած գոյնը կապոյտն էր, այնչափ որ Հռովմայեցիք հաղորդ ըսելու տեղը երբեմն վնեպիեցի կ'ըսեն եղեր : | Տակ հագուստնին երկայն է եղեր ինչուան գետինը . տակէն երկայն կապայ, մէջքերնին գօտի, վրանին ալ լայն վերարկու մը :

Դուքսը, որ Տոթ ալ կ'ըսուի, ուրիշ մեծամեծներուն ձեռվը կը հագուէր . միայն իրեն վերարկուն շատ անգամ ծիրանի էր, գուրապաներն ալ միշտ ծիրանի՝ չըունաց կայսերաց հա-

գածին նման : || Երարկուին վրայէն ինչուան կէս մէջքը սամուրենիէ մուշտակ կը հագնէր, գլուխն ալ կարմիր թաւիշէ գտակ մը կը դնէր՝ պղտիկ սաղաւարտի ձեռվ . աս գտակին սովորական անունը իրենց մէջը եղիլու էր : Ձեւ աս պատկերին մէջ ալ կ'երենայ :

Լանանց հագուստը մետաքսէ էր . տակէն երկայն կապայ, վրայէն փառաւոր մուշտակ կը հագնէին, գլուխնին ալ կլոր խոյր մը կը դնէին զարդարուն . ոսկիէ ու արծըթէ ապա-



|| Էներիէցոց Աշուհիներուն զգեստը :

րանջաններ ու վզնոցներ ունեին, մատուցնին ալ սուղ սուղ մատնիներով կը զարդարեին: || Եծամեծները ձիով կը պտըտէին քաղաքին քարայատակ եղած փողոցները • իսկ անոնց կանայքը՝ փոշիէ ու շաղախէ ազատ մնալու համար՝ բարձր բարձր ոտքի ամաններ կը հագնէին, ինչպէս որ հոս դրուած պատկերին մէջ ալ կ'երենայ:

Քահանայից վերարկուն սե էր, ժողովրդապետներունը կապոյտ կամ մանուշակագոյն • և որովհետեւ մորուք ածիլելը | ոնդոքարտացւոց մէջ գերութեան նշան էր, առջի բերան

քահանաներն ալ կ'ածիլէին մորուքնին՝ իբր թէ իրենց լուսուծուցնելու համար • բայց ետքը իրենք ալ աշխարհականաց պէս սկսան մորուք թողուլ, ու նաև զարդարուն ձեւերով կտըրտել: Ը ատ աշխատեցան պատրիարքները աս զեղծմունքը վերցընելու • վերջապէս վեշտասաններորդ դարուն մէջ հռովմէական քահանայից ձեւը առին նաև վենետիկեցի եկեղեցականները, որ ինչուան հիմա ալ կը գործածեն:

Օ ինուորականաց ու զանազան պաշտօնատեարց հագուստներն ալ բո-

լոր տարբեր տարբեր էին ու ստեղ
ստեղ կը փոխուեին . բայց ընդհան-
րապէս անոնք ալ աւելի արևելեան
ձեի վրայ էին :

Հոգմայ Քահանայապետաց ընտրութիւնը :

Հոգմական եկեղեցւոյ արտա-
քին հռչակաւոր արարողութիւննե-
րէն մէկն է պապին ընտրութէ հան-
գէսը . և որովհետև աս տարի ալ ե-
ղաւ աս հանգէսը՝ հիմակուան սրբա-
զանին Պիոսի թ. ընտրութեամբը ,
կ'արժէ որ հոս համառօտ ստորա-
գրութիւնը ընենք :

Յայտնի է որ պապ ընտրողներն են
Հոգմէական եկեղեցւոյ ծիրանա-
ւորները , որ հասարակօրէն լատին
բառով հարդիւալ կ'ըսուին . իսկ իրենց
ժողովատեղին կ'ըսուի փակարան , և
լատիներէն Concilave : Ու պէտ որ և
իցէ քաղաքի մէջ ալ կրնայ ըլլալ պա-
պերուն ընտրութիւնը (ինչպէս Պիոս
է Ա Ենետիկի մէջ ընտրուեցաւ), բայց
սովորական տեղն է Ա ատիկանի պա-
լատը : Աւ կարդը աս է : Արքազան
պապը վախճանելուն պէս ծիրանաւո-
րաց առաջին փոյթը կ'ըլլայ փակա-
րանին տեղը որոշել , ու վախճանելոյն
յուղարկաւորութեան իննօրէքը դեռ
շմբնցած՝ պատրաստած պիտի ըլլայ
փակարանը աս կերպով : Այս մէկ
մեծ սրահի մը մէջ մէյմէկ պղտիկ
փայտակերտ խուցեր կը շինեն ծիրա-
նաւորաց թուովը , որ եօթանասու-
նէն աւելի ըլլար . աս խուցերը ամէնն
ալ առանձին միջոցով բաժնուած են
իրարմէ . իւրաքանչիւրը թուանշան
ունի՝ ու վիճակով բաժնուած է ծի-
րանաւորաց : Ասոնցմէ որոնք որ վախ-
ճանած պապէն առած են իրենց պա-
տիւը , անոնց խուցերը դրսէն մութ-
մանուշակագոյն թաւիշով ծածկուած
է , իսկ մէկանոնցը կանանչ չուխայով :

Փակարանին մէջ եղողները չորս
կարդի անձինք են . առ , բուն ժողովա-

կանք , այսինքն ծիրանաւորները . ք,
վարդապետք , որ ծիրանաւորաց օգ-
նականներն են . դ , պաշտօնատեարք ,
որ գործողութիւնները կը կատարեն .
դ , պաշտօնեայք՝ որ ծառայութիւն
կ'ընեն :

Ա արդապետներէն մէկը ընտրուած
է վերատեսուչ փակարանին , որ հա-
զարապետի պէս կընայի որ ամէն բան
տեղովը առաջ երթայ . ասիկայ ալ իր
ձեռքին տակը ուրիշ անձինք ունի :
Պաշտօնատէրներուն գլխաւորները
ասոնք են . խոստովանահայր մը , քա-
րոզիչ մը , պապին լուսարարը , երկու
բժիշկ , մէկ դեղապետ մը . նուիրա-
կապետ՝ որուն ձեռքն են դրսի դրան
բանիքները , ներսիններն ալ գանձա-
պետին ձեռքն են՝ որ է առաջին ա-
րարողապետ : Խակ ծառայողներն են
ամէն մէկ ծիրանաւորի երկերկու ծա-
ռայ , իսկ հիւանդներուն իրեք իրեք
ծառայ . անոնցմէ զատ խոհարաններ ,
երկու սափրիչ , հիւս , որմնադիր ,
բեռնակիր , աւելածու և այլն :

Փակարանին ամէն բանը այսպէս
կարգի դրուելէն ետքը՝ պապին մա-
հուընէն տասը օր վերջը ծիրանաւոր-
ները սուրբ . Պետրոսի եկեղեցին կը
ժողվուին . իրենց մէջէն աւելի պա-
տուաւորը կամ ծերագոյնը՝ պատա-
րագ կ'ընէ 'ի պատիւ Հոգւոյն սրբոյ ,
վարդապետաց մէկն ալ՝ յորդորական
քարոզ մը կը խօսի նոր քահանայա-
պետին ընտրութեանը վրայօք , ու ետ-
քը մեծ կղերիկոսը պապական խաը
բունած՝ ծիրանաւորաց առջեւէն կ'եր-
թայ . անոնք ալ թափօրով ու մեծ
հանդիսով կ'երթան փակարանին մէ-
ջի մատուաը . հոն աղօթք մը ընելէն
վերջը՝ կը կարդան Պարիգոր Ժե պա-
պին սահմանադրութիւնը՝ որ գրած է
Հոգմայ քահանայապետաց ընտրու-
թեանը վրայ , ու ամէնն ալ կ'երդուըն-
նան որ պահէն . ետքը նախագահը
կարձյորդորակ մը կը խօսի , ու մէկէն
կը մանեն իրենց խուցերը . հոն ամէն
մարդ եկեղեցական թիկնոցը վրան ա-
ռած կընստի խուցին պղտիկ պատու-